

Յարութիւն Թումանեան. «ՆՈՒԾԳՆԵՐ», 78 եր. գ. 30 կ. Թիֆլս, 1902 թ.

Ժամանցի համար կարելի է կարդալ պ. Յարութիւն Թումանեանցի «Դալի-Մահրասա» պատմական պօէմը, որ ներշնչուած է համակրելի գաղափարով և կարդացւում է թեթև կերպով:

Այդ պօէմը տպուած է պ. Թումանեանի «Եռագների» երկրորդ բաժնում: Առաջին բաժնում տպուած են մի շարք քնարերգական ուսանաւորներ, որոնք սակաւ բացառութեամբ («Երբ ժպտում էր ուրախ, զուարթ»), «Մաղկոց մտայ» և «Աւերակների մէջ») լոկ յանգաւոր զատարկաբանութիւններ են, թէն պ. հեղինակը համոզուած է, որ «մեր ազգը» «երկար գարեր» «բերան արած՝ կ'երգի» իր «սիրոյ երգերը»:

Խեղճ ազգ:

S. 3.

Յարութիւն Թումանեան. «ՄՈՒՍԱ», Պատմական պօէմ, նուագ առաջին, 40 եր. գ. 20 կ. Թիֆլս 1902 թ.

Պ. Յարութիւն Թումանեանը (պէտք է տարբերել պ. Յովհաննէս Թումանեանցից) այն հեղինակների թւին է պատկանում, որոնք «զրելացաւով» են բռնուած:

«Պատմական պօէմաներ» է, որ թխում է մեր «պօէտը»:

Սակայն վերջին «Պատմական պօէման», «Մուսան», աչքի է ընկնում նրա միւս պօէմաների մէջ:

Այս նոր պօէմայում պ. Յար. Թումանեանն անվերջ շեղումներ է անում ձ լա Բայրըն՝ իր անձնական հայիւնները մաքրելու համար այն անձանց հետ, որոնք երբ և իցե աշխատել են ապացուցանուլ, որ ինքը բանաստեղծ չէ, այլ միմիայն ոտանաւորներ թխող:

Թէ որքան արդար և խելացի են «պօէտի» յարձակումները՝ կարելի է եզրակացնել նրանից, որ նա «թերուա» է անուանում Գէորգեան ձեմարանի ամբողջ գասընթացքը և այնուհետև Մոսկուայի համալսարանը աւարտած մի քննադատի, որովհետեւ այդ քննադատը յանդգնել է աննպաստ կարծիք յայտնել նրա (պ. Յար. Թումանեանի) ոտանաւորների մասին:

S. 3.